ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 9 -ի թիվ 305 -Ա

«ՕՇԱԿԱՆԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, «Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Մելիքյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Մելիքյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 17-ը ներառյալ:
2. Լիանա Մելիքյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արմինե Բաբայանի վրա:
3. Լիանա Մելիքյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 18-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/10/2026 12:30:14 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ